

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Հակոբյան Ֆրիդա

*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
Երևան, Հայաստան*

Համառոտ ներածական: Մրցունակ կրթության համակարգի ձևավորման հիմքերից են որակյալ հանրակրթության կազմակերպումն ու իրականացումը: Ներկայումս ՀՀ-ում հանրակրթության ոլորտի և ուսուցիչների մասնագիտական գործունեության նկատմամբ փոփոխվող պահանջները պայմանավորված են ՀՀ կառավարության կողմից որդեգրված որակյալ կրթությունն ապահովելու նպատակադրմամբ: Հանրակրթական ուսումնական հաստատությունն ապահովում է հիմնարար այն գիտելիքների պաշարը, որն անհատը պետք է համալրի ու կիրառի իր ողջ կյանքի ընթացքում: Այն նպաստում է ազգային ու համամարդկային արժեքներ կրող անհատի և քաղաքացու ձևավորմանն ու նրա համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Ուստի կարևորվում են այս ոլորտում մրցունակ մասնագետների առկայությունն ու արդյունավետ մանկավարժական գործունեության իրականացումը:

Ուսուցչի մասնագիտական գործունեության բարդությունն ու բազմակողմանիությունը, այդ գործունեության շրջանակներում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները, ինչպես նաև հանրակրթության որակի նկատմամբ ներկայացվող մշտափոփոխ պահանջները պայմանավորում են ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման կարևորությունն ու դրան առնչվող հիմնահարցերի խորքային ուսումնասիրությունը: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է ՀՀ-ում հանրակրթության ոլորտի լայնածավալ բարեփոխումներով, մասնավորապես «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի լրամշակմամբ, Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորմամբ ու հաստատմամբ (2021 թ.), ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացներում տեղի ունեցող բարեփոխումներով, ինչպես նաև կրթության որակի նկատմամբ բոլոր շահակիցների տարաբնույթ պահանջմունքներով:

Բանալի բառեր: Կրթական բարեփոխումներ, հանրակրթության որակ, ուսուցչի մասնագիտական գործունեություն, ուսուցչի մասնագիտական զարգացում, ուսուցչի վերապատրաստում, ուսուցչի կոմպետենցիաներ:

Հիմնախնդիրը: ՀՀ-ում ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման հիմնախնդիրներին անդրադարձը պայմանավորված է հանրակրթության նոր չափորոշիչների մշակմամբ ու ներդրմամբ, աշակերտների կրթական պահանջմունքների փոփոխություններով, հանրակրթական ուսումնական հաստատությունների և ուսուցիչների հաշվետվողականության նկատմամբ ներկայացվող հարափոփոխ պահանջներով: Կարելի է ենթադրել, որ մասնագիտական զարգացումն ուսուցիչների մասնագիտական գործունեությունը շարունակելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու հիմնարար միջոցներից է:

Հանրակրթության որակը գնահատելիս նախևառաջ հաշվի են առնվում աշակերտների կրթական վերջնարդյունքները, որոնք պայմանավորված են նաև ուսուցիչների մասնագիտական գործունեության արդյունավետությամբ: Դա է պատճառը, որ հանրակրթության ոլորտի բարեփոխումների համատեքստում արծարծվող առանցքային հիմնահարցերը վերաբերում են ուսուցիչների մասնագիտական գործունեությանն ու մասնագիտական զարգացման գործընթացի կատարելագործմանը:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Կրթության ոլորտի բարեփոխումների իրականացման համատեքստում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ոլորտի տեսաբանների և հետազոտողների, փորձագետների, կառավարիչների ուսումնասիրությունների առանցքում են նաև ուսուցիչների մասնագիտական գործունեությանն առնչվող հիմնահարցերը: Հոդվածի շրջանակում ուսումնասիրվել է թեմային առնչվող հայալեզու և օտարալեզու մասնագիտական արդի գրականություն, իրականացվել է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ուսումնասիրություն, ինչպես նաև ՀՀ 11 մարզերի հանրակրթական ուսումնական հաստատությունների 432 ուսուցիչ շրջանում անցկացվել է էլեկտրոնային հարցում՝ պարզելու ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում:

Հոդվածի նպատակը: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ-ում ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնախնդիրներն ու ներկայացնել դրանց լուծման ուղիները:

Հետազոտության նորույթը: Նորովի քննվել և վերլուծության են ենթարկվել ՀՀ-ում ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնախնդիրները, և ներկայացվել են դրանց լուծման ուղիները: Սույն հոդվածի շրջանակում իրականացված վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել կրթության ոլորտի բարեփոխումների, ոլորտային քաղաքականության ու ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում՝ նպաստելու նրանց մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ու կրթության որակի բարելավմանը:

Հիմնական նյութի շարադրանքը: Անհերքելի են ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման դերն ու կարևորությունը նրանց մասնագիտական և անձնային աճի, հանրակրթական ուսումնական հաստատության հեղինակության, ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետության և հանրակրթության որակի բարձրացման գործընթացներում: 21-րդ դարում կրթական համակարգերը մեծապես հիմնվում են մանկավարժների մասնագիտական զարգացման՝ որպես կրթության որակի բարելավման առաջնային մեխանիզմի վրա [4]: Մանկավարժների մասնագիտական զարգացման գործընթացը միտված է նրանց կոմպետենցիաների ու փորձի համալրմանը, կրթական բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, մասնագիտական գործունեության նոր շարժառիթների ձևավորմանը, ինքնավստահության մակարդակի և ինքնագնահատականի բարձրացմանը, մասնագիտական կապերի և համագործակցության հաստատմանը:

«Ուսուցչի մասնագիտական զարգացում» եզրույթը տարբեր երկրներում տարբեր կերպ է մեկնաբանվում՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ուսուցիչներն ինչ կրթություն են ստանում մինչև ուսուցչի աշխատանքին անցնելը: Որքան էլ բարձրագույն մասնագիտական կրթությունը որակյալ լինի, այն չի կարող պատրաստել ուսուցիչներին հետագա մասնագիտական ողջ գործունեության ընթացքում մարտահրավեր-

ներին դիմակայելու և հարավոփոխ պահանջները բավարարելու համար: Հետևապես կրթության համակարգում կարևոր հիմնախնդիր է ուսուցիչների մասնագիտական զարգացման տարատեսակ հնարավորությունների ստեղծումը, որը կնպաստի որակյալ մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորմանը [2, էջ 48]:

Ուսուցչի մասնագիտական զարգացումը սահմանվում է որպես մասնագիտական ծրագրերի ու միջոցառումների ամբողջություն, որը նպատակ ունի համալրելու նրա գիտելիքները, կարողությունները, հմտությունները, փորձառությունը և մասնագիտական գործունեությանն անհրաժեշտ մասնագիտական ու անձնային այլ որակները [5, էջ 86]: Այն ներառում է ուսումնառության *ֆորմալ* (միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն), *ոչ ֆորմալ* (որակավորման ու վերաորակավորման դասընթացներ, վերապատրաստումներ, գիտաժողովներ, աշխատաժողովներ, այլ ուսումնական հաստատություններ և կրթական տարածքներ ճանաչողական այցեր, գործընկերային գնահատում, մասնագիտական ցանցերին անդամակցություն) և *ինֆորմալ* (գործընկերների հետ ինֆորմալ քննարկումներ, մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում հետազոտությունների իրականացում, մասնագիտական գրականության ընթերցում) ուսուցման եղանակների միասնությունը, որը հարստացնում է ուսուցիչների դասավանդման փորձն ու նպաստում ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը [5]:

ՀՀ-ում կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ուսուցիչների մասնագիտական զարգացման գործընթացին առնչվող օրենսդրական կարգավորումներում փոփոխություններ ու լրացումներ են կատարվել, և շարունակվում են այս գործընթացին առնչվող բարեփոխումները: Մասնավորապես, լրամշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել են «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը հաստատելու մասին» և «Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՄ նախարարի հրամանները, «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և մի շարք այլ ենթաօրենսդրական ակտեր:

ՀՀ-ում ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնախնդիրները բացահայտելու նպատակով սույն հետազոտության շրջանակում իրականացված հարցմանը մասնակցել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 432 ուսուցիչ: Ուսումնասիրությունը փաստում է, որ ՀՀ-ում ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնական ձևը ատեստավորմանը նախորդող վերապատրաստումներն են: Հարցվածները հիմնականում վերապատրաստումներն արդյունավետ են որակել, սակայն առանձնացրել են նաև վերապատրաստումների մի շարք թերություններ՝ ոչ մատչելի ուսումնական նյութեր, գործնական աշխատանքների սակավություն, վերապատրաստող մասնագետի ոչ բավարար փորձ, մասնագիտական գործունեության բարելավմանն անհրաժեշտ ոլորտային տեղեկատվության պակաս: Վերապատրաստումների թերությունների թվում ուսուցիչներն առանձնացրել են նաև ուսուցման ոչ ժամանակակից մեթոդների ու միջոցների կիրառումը, ինչպես նաև առանձին դեպքերում ներկայացված դասավանդման մեթոդների գործնականում կիրառելու անհնարինությունն ու ցածր արդյունավետությունը: Ըստ հարցվածների՝ հիմնականում

վերապատրաստումների կազմակերպման և իրականացման գործընթացներում հաշվի չեն առնվում ուսուցիչների գիտելիքներն ու անհատական կարիքները, քանի որ չեն իրականացվում այդ կարիքների գնահատում ու դրա հիման վրա ուսուցիչների ըստ մասնագիտական կարիքների խմբավորում: Եթե անգամ առանձին դեպքերում նշված գործողություններից մեկը կամ մի քանիսն իրականացվում են վերապատրաստումներից առաջ, ապա դրանք այնքան էլ մեծ արդյունավետություն չեն ապահովում:

Հարցվածների կեսից ավելին վերապատրաստումները որակել է արդյունավետ, մինչդեռ հաշվի առնելով վերապատրաստումների վերոնշյալ թերությունները՝ կարելի է ենթադրել, որ դրանք չէին կարող ապահովել մեծ արդյունավետություն: Մասնակիցների հիմնական մասը որպես վերապատրաստումների առավելություն ներկայացրել է դասավանդման նոր մեթոդների տիրապետմանը նպաստելը, սակայն վերապատրաստումների թերությունների ուսումնասիրությունը փաստում է, որ հետագայում դրանք գործնականում հնարավոր չի լինում կիրառել: Ջուզահեռաբար պետք է նշել, որ համաձայն «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 24-Ն հրամանի (ընդունված 05.03.2021)՝ յուրաքանչյուր տարի ուսուցիչների վերապատրաստումներից հետո կրթության կառավարման և տեղեկատվական համակարգում վերապատրաստման մասնակցած ուսուցիչների կողմից իրականացվում է ցանկում ընդգրկված կազմակերպությունների գնահատում հետևյալ չափանիշներով՝ վերապատրաստման նյութերի բովանդակություն և որակ, վերապատրաստող անձնակազմի պատրաստվածություն, վերապատրաստման կազմակերպման որակ և հետագա գործունեության համար վերապատրաստման օգտակարություն: Կազմակերպության գործունեությունը գնահատվում է յուրաքանչյուր տարի իր կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա, իսկ դասընթացը՝ «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի (ԿԶՆԱԿ) կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա [1]: Ուսուցիչների մասնագիտական զարգացումը հստակ նպատակների վրա հիմնված գործընթաց է, ուստի պետք է պարզել՝ որքանով է այն ապահովել նախապես սահմանված վերջնարդյունքները, բացի դրանից՝ կարևորվում է նաև մասնագիտական զարգացման ծրագրի մասնակիցների հետ հետադարձ կապը՝ հետագայում ուղղորդելու մասնագիտական զարգացման ծրագրերի բարեփոխումները:

Մասնագիտական զարգացման ծրագրերի ընտրությունը պայմանավորող հիմնական գործոնների թվում ուսուցիչներն առանձնացրել են վերապատրաստման նյութերի բովանդակությունն ու դասավանդող մասնագետի փորձը: Հարկ է նկատել նաև հետևյալ օրինաչափությունը. վերապատրաստման նյութերի բովանդակությունն ու դասավանդող մասնագետի փորձը հարցման մասնակիցները ներկայացրել են նաև որպես վերապատրաստումների հիմնական թերություն: Հետևապես, ուսուցիչներն իրենց փորձի հիման վրա առաջարկում են մասնագիտական զարգացման ծրագիրն ընտրելիս նախևառաջ բավարար տեղեկություն ունենալ ուսումնասիրվող թեմաների ու դասավանդող մասնագետի փորձի մասին:

Մասնագիտական զարգացման ծրագրերին ուսուցիչների մասնակցությունը խոչընդոտող հիմնական գործոններից են եղել ուսուցիչների ոչ բավարար ազատ ժամանակը, ծրագրի անցկացման ժամանակաշրջանը, ծրագրի անցկացման վայրը, տնօրենի կողմից ուսուցչի ծրագրի մասնակցությանը դեմ լինելը, ոչ բավարար ֆինանսական միջոցները, ծրագրի մասնակցության դեպքում հետագայում դասերը լրացնելու պահանջը: Կարելի է եզրակացնել, որ անհատական, ինստիտուցիոնալ և

համակարգային մակարդակներում առկա են մի շարք գործոններ, որոնք խոչընդոտում են ուսուցիչների մասնագիտական զարգացումը, այդ թվում՝ նաև մասնագիտական զարգացման ծրագրերին մասնակցությունը:

Ըստ հետազոտության արդյունքների՝ ուսուցչի մասնագիտական զարգացումը խթանող հիմնական գործոններն են ինքնակրթվելու շարժառիթներն ու համագործակցային առողջ միջավայրը, որը կարող է նպաստել կրթական նորարարությունների ստեղծմանն ու մանկավարժական առաջավոր փորձի տարածմանը: Ուսումնասիրությունը փաստում է, որ ՀՀ-ում ինստիտուցիոնալ մակարդակում բացակայում է ուսուցիչների մոտիվացման համակարգը: Ուսուցչի մասնագիտական զարգացումը խթանող գործոնների շարքում առանձնացվել են նաև վերապատրաստող փորձառու մասնագետների առկայությունը, ֆինանսական խրախուսումը, մանկավարժական գործունեության նկատմամբ հետաքրքրվածության բարձր մակարդակը, ուսումնական հաստատությունում նորարարությունների խրախուսումն ու աջակցությունը: Ենթադրաբար ուսուցիչների մասնագիտական զարգացման համար կարևոր է և՛ արտաքին, և՛ ներքին մոտիվացիան:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման համատեքստում դասալսումների կարևորությունը հաշվի առնելով՝ հարցման մասնակիցները նշել են, որ իրենց դպրոցներում իրականացվում են դասալսումներ ուսուցիչների, մասնախմբի ղեկավարի, տնօրենի և փոխտնօրենի կողմից: Հարկ է նշել, որ դեռևս բացակայում են վերոնշյալ դասալսումների արդյունավետության գնահատման մեխանիզմները, որոնք հնարավորություն կտան պարզելու՝ որքանով են դրանք նպաստել ուսուցիչների կատարողականի բարելավմանը: Բացի դրանից՝ չկան դասալսման ու դրա արդյունավետության գնահատման վերաբերյալ հատուկ դասընթացներ կամ ռուբրիկներ:

Ուսուցչի մասնագիտական զարգացման գործընթացում կարևորելով ոլորտային հետազոտությունների իրականացումը՝ պետք է նշել, որ հարցմանը մասնակցած 432 ուսուցչից միայն 30-ն ունի տպագրված (թվով՝ ընդամենը 38) գիտական աշխատանք: Կարելի է ենթադրել, որ ուսուցիչներն անհատական կամ խմբային մակարդակում շատ քիչ են զբաղվում ոլորտային հետազոտություններով, իսկ զբաղվելու դեպքում էլ դրանք չեն տպագրում: Հարկ է նշել, որ համաձայն «Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 367 Ա/2 հրամանի (ընդունված 04.03.2022)՝ վերապատրաստման ծրագրի պարտադիր բաղադրիչներից է դարձել հետազոտական աշխատանքի իրականացումը՝ ըստ առաջարկվող թեմաների [3]: Ենթադրաբար վերապատրաստման ծրագրում այս բաղադրիչի ներառումը միտված է նպաստելու ուսուցիչների հետազոտական հմտությունների զարգացմանն ու հետազոտական աշխատանքներ իրականացնելու շարժառիթների ձևավորմանը:

Ուսումնասիրությունը փաստում է, որ ՀՀ-ում ուսուցիչները մասնագիտական զարգացմանն ուղղված ֆորմալ միջոցառումներին հազվադեպ են մասնակցում և առավել հաճախ մասնակցում են ոչ ֆորմալ միջոցառումներին: Սա կարելի է պայմանավորել ուսուցիչների գերձանրաբեռնված աշխատանքային գրաֆիկով. հարցվածների 80 %-ը և ավելին նշել են, որ դասերից հետո կարիք է լինում արտաժամյա աշխատանք իրականացնելու հետևյալ նպատակներով՝ գրավորների ստուգում, հաջորդ դասի պլանավորում, միջոցառումների կազմակերպում, ծնողական ժողովներ, ուսումնական նյութերի պատրաստում, դասամատյանների լրացում և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ պարապմունքների անցկացում:

Եզրակացություն: Իրականացված ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ չնայած ՀՀ-ում ուսուցիչների մասնագիտական զարգացման գործընթացներին առնչվող բարեփոխումներին՝ այնուամենայնիվ առկա են ուսուցիչների մասնագիտական զարգացման արդյունավետ իրականացումը խոչընդոտող մի շարք հիմնախնդիրներ: Դրանք պայմանավորված են թե՛ ներքին (ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի ցածր մակարդակ, գործընկերների հետ ոչ հաճախակի համագործակցություն, ժամանակի սղություն) և թե՛ արտաքին (ուսուցչի ցածր աշխատավարձ, սթրեսային և գերձանրաբեռնված աշխատանք, հասարակության մեջ ուսուցչի աշխատանքի ցածր վարկ, նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների ոչ բավարար մակարդակ և/կամ բացակայություն) մի շարք գործոններով: ՀՀ-ում ուսուցիչների մասնագիտական զարգացման վերոնշյալ հիմնախնդիրների լուծման նպատակով առաջարկվում են տարաբնույթ փոփոխություններ, մասնավորապես.

✓ ***անհատական մակարդակում.***

- ուսուցիչների կողմից անհատական և/կամ խմբային ոլորտային հետազոտությունների հաճախակի իրականացում՝ բացահայտելու և տարածելու մանկավարժական առաջավոր փորձը գործընկերների շրջանում,
- վերապատրաստող մասնագետների հետ հետադարձ կապի ապահովում և վերապատրաստումների գնահատման մեխանիզմների կիրառում՝ պարզելու դրանց արդյունավետությունն ու բարելավման հետագա քայլերը,
- մասնագիտական գործունեության ինքնագնահատում և շարունակական ինքնակրթության իրականացում,

✓ ***ինստիտուցիոնալ (դպրոցի) մակարդակում.***

- ուսուցիչների նյութական (պարգևատրում, հավելավճար) և ոչ նյութական (աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգի կիրառում, հետադարձ կապի ապահովում, մասնագիտական զարգացման հնարավորությունների ընձեռում) խրախուսման մեխանիզմների մշակում ու ներդրում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող բուհերի ու դպրոցների համագործակցության շրջանակների ընդլայնում՝ մանկավարժական լավագույն փորձը բացահայտելու և տարածելու նպատակներով,
- դասալսումների արդյունավետության գնահատում ու կատարողականի ցածր ցուցանիշներ ունեցող ուսուցիչներին մասնագիտական խորհրդատվության և աջակցության ցուցաբերում գործընկերների կողմից,
- հանրակրթական ուսումնական հաստատություններում սկսնակ ուսուցիչներին առավել փորձառու մասնագետների և մենթորների կողմից ուղղորդված մասնագիտական խորհրդատվության տրամադրման մեխանիզմների ստեղծում ու կիրառում,
- հանրակրթական ուսումնական հաստատություններում առավել հաճախակի վերապատրաստումների կազմակերպում և ուսումնասիրվող մեթոդների կիրառում կոնկրետ դասարաններում,

✓ ***պետական մակարդակում.***

- կրթության ոլորտի բարեփոխումների պլանավորման և իրականացման գործընթացներում ուսուցիչների ներգրավվում ու ոլորտի բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում համապատասխան միջոցառումների միջոցով,

- ուսուցիչների շարժունության և մասնագիտական զարգացման պայմանների շրջանակի ընդլայնում,
- ուսուցիչների աշխատավարձերի և աշխատանքային բեռնվածության ու գրաֆիկների վերանայում,
- ուսուցիչների մասնագիտական զարգացման ու առաջխաղացման փոխկապակցված՝ նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների մշակում ու կիրառում,
- վերապատրաստումներից առաջ ուսուցիչների կոմպետենցիաների գնահատում և մասնագիտական անհատական կարիքների բացահայտում,
- ուսուցիչների վերապատրաստումների բովանդակային փոփոխությունների իրականացում և արդիականացում, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներում առավել փորձառու վերապատրաստողների ներգրավվում:

TEACHERS' PROFESSIONAL DEVELOPMENT ISSUES AND WAYS OF SOLUTION IN THE RA

Hakobyan Frida

Brusov State University, Armenia

Summary

The relevance of this article is conditioned by the large-scale reforms in the field of general education in the Republic of Armenia (RA), the different demands of all stakeholders on the quality of education, and the exigency of study the existing issues in the field. Within the framework of this article, modern professional literature related to the topic was studied, the legislation in the field of education was analyzed, as well as an electronic survey was conducted among 432 teachers of general education institutions in 11 regions of RA to find out the issues of teachers' professional development in the RA. The results of the analysis conducted within the framework of this article can be further implemented in the processes of development and implementation of reforms in the field of education, educational policy and teachers' professional development programs in order to increase efficiency of their professional activity and to improve education quality.

Keywords: educational reforms, general education quality, professional activity of a teacher, professional development of a teacher, training of a teacher, teacher competencies.

ПРОБЛЕМЫ ПРОФЕССИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ УЧИТЕЛЕЙ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ В РА

Акопян Фрида

Государственный университет имени В. Брюсова, Армения

Аннотация

Актуальность данной статьи обусловлена широкомасштабными реформами в сфере образования в Республике Армения (РА), различными требованиями всех заинтересованных сторон к качеству образования, а также необходимостью изучения существующих проблем в сфере образования. В рамках статьи была изучена современная профессиональная литература по теме, проанализировано законодательство в сфере образования, а также проведен электронный опрос среди 432 учителей общеобразовательных учреждений в 11 областях РА, чтобы выяснить проблемы профессионального развития учителей в РА. Результаты анализа, проведенного в данной статье, могут быть использованы в процессе разработки и реализации реформ в сфере образования, образовательной политики и программ повышения квалификации педагогов в целях повышения эффективности их профессиональной деятельности и качества образования.

Ключевые слова: образовательные реформы, качество общего образования, профессиональная деятельность учителя, профессиональное развитие учителя, переподготовка учителя, компетенции учителя.

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 24-Ն հրաման (ընդունված 05.03.2021):
2. Հակոբյան Ֆ., *Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում*, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ», Երևան, «Լինգվա», 2020, 2(53), էջ 45-60:
3. «Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 367 Ա/2 հրաման (ընդունված 04.03.2022):
4. Bowe J., Gore J. *Reassembling Teacher Professional Development: The Case for Quality Teaching Rounds*, *Teachers and Teaching: Theory and Practice* 23(3), 2016, 352- 366.
5. Darling-Hammond L., Hyler M. E., Gardner M. *Effective Teacher Professional Development*, Palo Alto, CA: Learning Policy Institute, 2017.

Получено: 29.03.2022

Received 29.03.2022

Рассмотрено: 29.04.2022

Reviewed 29.04.2022

Принято: 03.05.2022

Accepted 03.05.2022